



Հայաստանի կենսաբ. հանդես, 2(64), 2012

«ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ» ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Ա. Լ. ՄԿՐՏՉՅԱՆ¹, Վ. Ե. ՈՍԿԱՆՅԱՆ², Վ. Լ. ԲԱՂԱԼՅԱՆ²

¹Հայաստանի պետական ագրարային համալսարան,

²«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ
badalyan_yahan@yahoo.com

Բերված են «Որդան կարմիր» արգելավայրի ֆլորայի արդի վիճակի ուսումնասիրության արդյունքները: Արգելավայրը ներկայացնում է ոչ մեծ հալոֆիտ համակեցություն, ինչը բնորոշ է Արարատյան հարթավայրի աղակալած տարածքներին: Ներկայումս արգելավայրի տարածքում դրանք պահպանվում են կղզյակներով և ունեն բացառիկ գիտական ու գործնական նշանակություն կենսաբազմազանության և Արարատյան հարթավայրի որդան կարմիր բնոթյան պահպանության համար: Մեր կողմից կատարվում են միջատի և նրա կերաբույսեր հանդիսացող որդանխոտի ու եղեգի պարբերական ուսումնասիրություններ: Արգելավայրի ֆլորան բաղկացած է 110 բարձրակարգ անդամավոր բուսատեսակներից, որոնք պատկանում են 82 ընտանիքների և 21 ընտանիքների: Արգելավայրի կենսաբազմազանության փոփոխության վրա ազդում են հողերի աղազեցումն, սեփականաշնորհման և անապատացման գործընթացները:

Արգելավայր – կենսաբազմազանություն – հալոֆիտ բուսականություն – որդան կարմիր

Приводятся результаты исследований современного состояния флоры и растительности заказника “Арагатская кошениль”, который представляет собой небольшую часть галофитной формации Арагатской равнины. Галофитные сообщества являются характерным компонентом растительности засоленных почв Арагатской равнины. В настоящее время они сохраняются лишь в виде отдельных фрагментов на территории заказника и имеют исключительно важное научное и практическое значение для сохранения биоразнообразия эндемического вида арагатской кошенили. Нами выявлено, что флора заказника представлена 110 видами высших сосудистых растений, относящихся к 82 родам и 21 семейству. Большое влияние на изменение биоразнообразия заказника имеют засоленные почвы, приватизация и опустынивание земель.

Заказник – биоразнообразие – галофитное сообщество – арагатская кошениль

The results of the study of present status of “Vordan Karmir” state sanctuary’s flora are presented. The state sanctuary represents not large halophyte community which is characteristic of saline regions of Ararat Valley. Currently they are preserved within the boundaries of reservation in the form of small islands and have unique scientific and practical importance for the preservation of biodiversity and endemic insect of Ararat Valley. Regular studies of the above mentioned insect and its fodder crops *Aeluropus littoralis* and *Phragmites communis* are being undertaken. Flora of the reservation consists of 110 species of vascular plants, which belong to 82 genera and 21 families. The reservation’s biodiversity changes due to the processes of soil desalinization, privatization and desertification.

State sanctuary – biodiversity – halophyte community – margarodes hameli

Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՀՊՏ) համակարգը (արգելոցներ, արգելավայրեր, ազգային պարկեր և բնության հուշարձաններ) ձևավորվել է 1958 թ-ին: Այդ գործընթացն առ այսօր էլ շարունակվում է, ինչը պայմանավորված էրկրի հազվագյուտ ու արժեքավոր բուսական և կենդանական տեսակների վտանգված լինելով և դրանց պահպանության անհրաժեշտությամբ:

«Որդան կարմիր» արգելավայրը ստեղծվել է ԲՀՊ տարածքների ընդհանուր համակարգի ձևավորումից ավելի ուշ՝ 1987 թ-ին, երբ ՀՍՍՀ կառավարության N61 որոշմամբ «Արարատյան դաշտի աղուտային էկոհամակարգերի, դրանց բուսական ու կենդանական աշխարհի ամբողջության պահպանության ու կայուն օգտագործման ապահովման, մասնավորապես, արժեքավոր միջատի՝ արարատյան որդան կարմիրի (*Porphyrophora hameli*) ու նրա սնման օբյեկտ հանդիսացող որդանխոտի (*Aeluropus litoralis*) պահպանության և վերարտադրության ապահովման» նպատակով առաջարկվեց հիմնադրել վերոհիշյալ արգելավայրը: Այս որոշման համար հիմք էր հանդիսացել դեռևս 1971թ. ՀՍՍՀ կառավարության հանձնարարությամբ ՀՀ ԳԱ Կենդանաբանության ինստիտուտի նախաձեռնած արարատյան որդան կարմիրի գիտահետազոտական ուսումնասիրությունները:

«Որդան կարմիր» արգելավայրը գտնվում է Արմավիրի մարզում, կազմված է երկու հատվածներից և զբաղեցնում 219.85 հա տարածք: Մի հատվածը գտնվում է Արագածի (198.33 հա), մյուսը՝ Ջրառատ (21.52 հա) գյուղական համայնքների վարչական տարածքներում [2]:

Արգելավայրի ստեղծումից հետո, հաշվի առնելով որդան կարմիր միջատի բացառիկ նշանակությունը, հիմնական աշխատանքները տարվում էր միջատի և որդանխոտի ուսումնասիրման ու պահպանման ուղղությամբ: Իսկ ինչ վերաբերում է արգելավայրի կենսաբազմազանությանը, հատկապես բուսական բազմազանությանը, ապա պետք է նշել, որ դեռևս ամբողջական պատկեր չկա:

Մեր աշխատանքի նպատակն է եղել ուսումնասիրել «Որդան կարմիր» արգելավայրի ֆլորայի կենսաբազմազանությունը և ներկայացնել արդի վիճակը:

Նյութ և մեթոդ: Աշխատանքի համար նյութ են ծառայել «Որդան կարմիր» արգելավայրի տարածքում 2007-2011 թվականների ընթացքում կատարված ուսումնասիրությունների արդյունքները: Կենսաբազմազանության ուսումնասիրումը կատարվել է երթուղային և ստացիոնար մեթոդներով, որոնք հնարավորություն են տվել հետազոտությունները իրականացել տարվա բոլոր եղանակներին: Ուսումնասիրվել է բույսերի տեսակային կազմը, ֆենոլոգիան, կատարվել են երկրաբուսաբանական նկարագրություններ: Բուսատեսակների հաշվառման համար կազմվել են հերթաբերումներ: Տեսակային կազմի որոշման համար օգտվել ենք համապատասխան գրականություններից [4,5]: Գիտարշավների ժամանակ հավաքված նյութերի մշակումը կատարվել է ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի բարձրակարգ բույսերի կարգաբանության և աշխարհագրության բաժնում և ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության ամբիոնում, որի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Արդյունքներ և քննարկում: Որդան կարմիր միջատը և որդանխոտը ապրում են աղուտային հողերի վրա, այսինքն արգելավայրում ձևավորված է յուրահատուկ աղուտային էկոհամակարգ: Այստեղ կարելի է հանդիպել հիմնականում, այնպիսի բուսատեսակների, որոնք կարող են ապրել հողում աղի բարձր պարունակության (մինչև 3%) պայմաններում՝ աղահասկիկ (*Halostachys*), աղաբույս (*Salicornia*), աղածաղիկ (*Halanthium*) և այլն) կամ այնպիսի մոլախոտերի, որոնք էկոլոգիապես շատ ճկուն են և ապրում են ցանկացած պայմաններում, այդ թվում նաև աղուտներում, (օրինակ, թելուկ սպիտակ (*Chenopodium album*), հովվամաղախ սովորական (*Capsella bursa pastoris*), խատուտիկ սովորական (*Taraxacum officinale*):

Արարատյան դաշտում գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման նպատակով 20-րդ դարի 60-ական թվականներից սկսվեց աղուտային հողերի աղազերծման գործընթացը: Արդյունքում կրճատվեց աղասեր բուսատեսակների քանակը, փոխվեց էկոհամակարգի կենսաբազմազանությունը և մոտ 70 տեսակ հալոֆիտ բույսեր կորցրին իրենց ցենոտիկ ակտիվությունը [3]: Ոչնչացման սպառնալիքի ենթակա դարձան հազվագյուտ բույսեր՝ բորակաթուփ շոբերին (*Nitraria schoberi*), որը պահպանվում է միայն արգելավայրի տարածքում, կարմրան ութառեջը (*Tamarix octandra*), կալախոտ կասպիականը (*Kalidium caspicum*), սարսազան կոնածնը (*Halocnemum strobilaceum*), որոնք ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված են որպես վտանգված տեսակներ (կամ անհետացման շատ բարձր ռիսկի առջև կանգնած տեսակներ վայրի

բնության մեջ), իսկ բիներցիա շուրջաթևը (*Bienertia cycloptera*) հայտնվել է կրիտիկական վիճակում (կամ անհետացման չափազանց բարձր ռիսկի առջև կանգնած տեսակ է) [1]:

20-րդ դարի վերջում հողերի սեփականաշնորհումն էլ իր հերթին նպաստեց կենսաբազմազանության փոփոխմանը՝ մի կողմից բերելով «Որդան կարմիր» արգելավայրում առանձնապես մեծ արժեք չներկայացնող բուսատեսակների և մոլախոտերի տարածմանը, մյուս կողմից՝ հազվագյուտ տեսակների կրճատմանը: Հողի սեփականաշնորհումից հետո արգելավայրն ամբողջովին շրջապատվեց սեփականաշնորհված գյուղատնտեսական հողակտորներով և բնակավայրերով, որտեղից տարբեր մոլախոտեր անարգել թափանցում են արգելավայրի տարածք: Այդ բույսերից են ուղտափուշը (*Alhagi pseudoalhagi*), գաղձը (*Cuscuta cesatiana*), դառնարմատը (*Goebelia alopecuroides*), եռակողասերմիկը (*Tripleurospermum inodorum*), որոնք արդեն կազմել են խմբավորումներ և աստիճանաբար մեծացնելով իրենց գրաված տարածքները՝ դուրս են մղում որդան կարմիր միջատի գոյության պայման հանդիսացող որդանխոտին և եղեգին (*Phragmites australis*):

Արգելավայրի կենսաբազմազանության փոփոխության վրա ազդում է նաև կլիմայի գլոբալ փոփոխությունը և անապատացումը: Տարածքների արիդացումն առաջին հերթին բնութագրական է անապատա-կիսաանապատային հողերին, որոնց թվին էլ պատկանում են աղուտները: Կլիմայի գլոբալ փոփոխության արդյունքում, ինչպես և կանխատեսվում էր, նկատվում է անապատային տարածքների ընդլայնում, որն էլ ենթադրում է հալոֆիտ բուսականության քանակական ավելացում: Այս գործընթացի ժամանակ առավելապես կտուժեն հազվագյուտ բույսերը, որոնք չունենալով էկոլոգականսաքանական հատկությունների ճկունություն, դուրս կմղվեն համակեցությունից:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ, չնայած կրած տարբեր փոփոխություններին, արգելավայրի տարածքում շարունակում են գերակշռող դիրք գրավել աղասեր բուսատեսակները՝ օշանները (շոռաններ), սուվեդ բարձրը (*Suaeda altissima*), գեյդլիցիա ծաղկավետը (*Seidlitzia florida*), քաֆուրախոտը (*Camphorosma lessingii*), հալիմիոնե գորտնուկավորը (*Halimione verrucifera*) և որդանխոտը:

Նախնական վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ արգելավայրում մեր կողմից արձանագրված ֆլորան բաղկացած է 110 բուսատեսակներից, որոնք պատկանում են 82 ցեղերի և 21 ընտանիքների (աղ. 1):

Տեսակներով ամենահարուստը թելուկազգիների (*Chenopodiaceae*) ընտանիքն է, որը ներկայացված է 27 տեսակով, 15 ցեղով: Ամենամեծ ցեղը նույնպես պատկանում է այս ընտանիքին. օշան՝ 6 տեսակով (*Salsola ericoides*, *S. dendroides*, *S. nitriaria*, *S. soda*, *S. macera*, *S. glauca*): Ընտանիքի մյուս ցեղերը ներկայանում են. սվեդան՝ 4 (*Suaeda altissima*, *S. confuse*, *S. heterophylla*, *S. acuminata*), մոխրաթելուկը (*Atriplex verrucifera*, *A. leucoclada* subsp. *turcomanica*, *A. tatarica*) և պետրոսիմոնիան (*Petrosimonia brachiata*, *P. glaucescens*, *P. glauca*)՝ 3-ական տեսակներով:

Տեսակների քանակով երկրորդ տեղում են գտնվում աստղածաղկազգիները (*Asteraceae*)՝ 18 տեսակ, որոնք էլ ներկայանում են 16 ցեղով (*Achillea*, *Acroptilon*, *Arctium*, *Anthemis*, *Artemisia*, *Carduus*, *Centaurea*, *Cirsium*, *Cichorium*, *Crepis*, *Lactuca*, *Sonchus*, *Taraxacum*, *Tripleurospermum*, *Xanthium*, *Podospermum*):

Այնուհետև գալիս է կաղամբազգիների (*Brassicaceae*) ընտանիքը՝ 17 տեսակ, 11 ցեղ, որից միայն դաշտակոտեմը հանդես է գալիս 5 տեսակով (*Lepidium ruderales*, *L. vesicarium*, *L. perfoliatum*, *L. crassifolium*, *L. latifolium*):

Դաշտավուկազգիները (*Poaceae*) չորրորդ տեղում են 11 տեսակով և 9 ցեղով: Երկու ներկայացուցիչները՝ որդանխոտը և եղեգը իրենց տնտեսական նշանակությամբ ամենարժեքավորն են արգելավայրում: Հինգերորդ տեղում բակլազգիների (*Fabaceae*) ընտանիքն է՝ 7 տեսակ, 6 ցեղ:

Մյուս՝ նեխուրազգիներ (*Apiaceae*), գաղտրիկազգիներ (*Boraginaceae*), իշակաթնուկազգիներ (*Euphorbiaceae*), խուլեղիկազգիներ (*Lamiaceae*), ճրագախոտազգիներ (*Orobanchaceae*), մատիտեղազգիներ (*Polygonaceae*), (*Tamaricaceae*) ընտանիքները ներկայանում են 2, 3 կամ 4 տեսակներով:

Աղյուսակ 1. «Որդան կարմիր» արգելավայրի ֆլորայի տաքսոնոմիական կազմը

APIACEAE 1. <i>Astrodaucus orientalis</i> (L.) Drude 2. <i>Conium maculatum</i> L. 3. <i>Falcaria vulgaris</i> Bernh. ASTERACEAE 4. <i>Achillea millefolium</i> L. 5. <i>Acroptilon repens</i> (L.) DC. 6. <i>Arctium palladinii</i> (Marc.) Grossh. 7. <i>Artemisia fragrans</i> Willd. 8. <i>Anthemis cotula</i> L. 9. <i>Carduus nutans</i> L. 10. <i>Centaurea solstitialis</i> L. 11. <i>Centaurea iberica</i> Trev. 12. <i>Cirsium arvense</i> (L.) Scop. 13. <i>Cirsium incanum</i> (S.G.Gmel.) Iljin 14. <i>Cichorium intybus</i> L. 15. <i>Crepis sancta</i> (L.) Babc. 16. <i>Lactuca serriola</i> Torn. 17. <i>Podospermum laciniatum</i> (L.) DC. 18. <i>Sonchus asper</i> (L.) Hill 19. <i>Taraxacum officinale</i> Wigg. 20. <i>Tripleurospermum inodorum</i> (L.) Sch. Bip. 21. <i>Xanthium italicum</i> Moretti BRASSICACEAE 22. <i>Alyssum desertorum</i> Stapf 23. <i>Arabidopsis pumila</i> (Steph.) N. Busch 24. <i>Barbarea minor</i> C. Koch 25. <i>Bunias orientalis</i> L. 26. <i>Capsella bursa-pastoris</i> (L.) Medik. 27. <i>Descurainia sophia</i> (L.) Webb. ex Prantl 28. <i>Erysimum sisymbrioides</i> C.A.Mey 29. <i>Hymenolobus procumbens</i> (L.) Fourr. 30. <i>Lepidium ruderales</i> L. 31. <i>Lepidium vesicarium</i> L. 32. <i>Lepidium perfoliatum</i> L. 33. <i>Lepidium crassifolium</i> Waldst. et Kit. 34. <i>Lepidium latifolium</i> L. 35. <i>Meniocus linifolius</i> (Steph.) DC. 36. <i>Sisymbrium altissimum</i> L. 37. <i>Sisymbrium loeselii</i> L. 38. <i>Sisymbrium inio</i> (L.) Fourr. BORAGINACEAE 39. <i>Arnebia decumbens</i> (Vent.) Coss. et Kral. 40. <i>Lappula sessiliflora</i> (Boiss.) Guerke 41. <i>Myosotis micrantha</i> Pall. ex Lehm. CHENOPODIACEAE 42. <i>Atriplex verrucifera</i> Bieb. 43. <i>Atriplex leucoclada</i> Boiss. subsp. <i>turcomanica</i> (Moq.) Aellen 44. <i>Atriplex tatarica</i> L.	45. <i>Bassia hyssopifolia</i> (Pall.) O.Kuntze 46. <i>Bienertia cycloptera</i> Bunge 47. <i>Camphorosma lessingii</i> Litv. 48. <i>Chenopodium chenopodioides</i> (L.) Aellen 49. <i>Climacoptera crassa</i> (Bieb.) Botsch. 50. <i>Halanthium rarifolium</i> C.Koch 51. <i>Halostachys caspica</i> (Bieb.) C. A.Mey 52. <i>Halocnemum strobilaceum</i> (Pall.) Bieb. 53. <i>Kalidium caspicum</i> (L.) Ung.-Sternb. 54. <i>Petrosimonia brachiata</i> (Pall.) Bunge 55. <i>Petrosimonia glaucescens</i> (Bunde) Iljin 56. <i>Petrosimonia glauca</i> (Pall.) Bunge 57. <i>Polycnemum arvense</i> L. 58. <i>Suaeda altissima</i> (L.) Pall. 59. <i>Suaeda confuse</i> Iljin 60. <i>Suaeda heterophylla</i> (Kar. et Kir.) Bunge 61. <i>Suaeda acuminata</i> (C.A.Mey.) Moq. 62. <i>Salsola ericoides</i> Bieb. 63. <i>Salsola dendroides</i> Pall. 64. <i>Salsola nitraria</i> Pall. 65. <i>Salsola soda</i> L. 66. <i>Salsola macera</i> Litv. 67. <i>Salsola glauca</i> Bieb. 68. <i>Salicornia europaea</i> L. CONVOLVULACEAE 69. <i>Convolvulus arvensis</i> L. CUSCUTACEAE 70. <i>Cuscuta cesatiana</i> Bertol. EUPHORBIACEAE 71. <i>Euphorbia boissierana</i> (Woronow) Prokh. 72. <i>Euphorbia sequierana</i> Neck. 73. <i>Euphorbia virgata</i> Waldst. et Kit. FABACEAE 74. <i>Alhagi pseudoalhagi</i> (Bieb.) Desv. 75. <i>Goebelia alopecuroides</i> (L.) Bunge 76. <i>Lotus caucasicus</i> Kuprian. Ex Juz 77. <i>Melilotus officinalis</i> Desr. 78. <i>Medicago lupulina</i> L. 79. <i>Trifolium arvense</i> L. 80. <i>Trifolium repens</i> L. LAMIACEAE 81. <i>Leonurus cardiaca</i> L. 82. <i>Mentha longifolia</i> (L.) L. 83. <i>Stachys atherocalyx</i> C.Koch. 84. <i>Lamium amplexicaule</i> L.	NITRARIACEAE 85. <i>Nitraria schoberi</i> L. OROBANCHACEAE 86. <i>Orobancha</i> sp. 87. <i>Cistanche salsa</i> (C.A.Mey.) G. Beck PAPAVERACEAE 88. <i>Papaver arenarium</i> Bieb. PLANTAGINACEAE 89. <i>Plantago lanceolata</i> L. POLYGONACEAE 90. <i>Polygonum aviculare</i> L. 91. <i>Rumex acetosa</i> L. 92. <i>Rumex dentatus</i> L. subs. <i>halacsyi</i> (Rech.) fil. 93. <i>Rumex crispus</i> L. POACEAE 94. <i>Aelouropus littoralis</i> (Gouan) Parl. 95. <i>Aelouropus pungens</i> (M.Bieb.) C.Koch 96. <i>Alopecurus arvensis</i> (C. Koch) Grossh. 97. <i>Anisantha tectorum</i> (L.) Nevski 98. <i>Apera intermedia</i> Hack. 99. <i>Bromus japonicus</i> Thunb. 100. <i>Eremopyrum triticeum</i> (Gaertn.) Nevski 101. <i>Phragmites australis</i> (Cav.) Trin. ex Steud. 102. <i>Poa bulbosa</i> L. 103. <i>Puccinellia gigantea</i> (Grossh.) Grossh. 104. <i>Puccinellia grossheimiana</i> V. Krecz. RUBIACEAE 105. <i>Galium aparine</i> L. TAMARICACEAE 106. <i>Tamarix ramosissima</i> Ledeb. 107. <i>Tamarix octandra</i> Bunge THYMELAEACEAE 108. <i>Thymelaea passeriana</i> (L.) Goss. et Germ. TYPHACEAE 109. <i>Typha angustifolia</i> L. ZYGOPHYLLACEAE 110. <i>Tribulus terrestris</i> L.
---	---	---

Մեկական ցեղով և տեսակով պատատուկազգիներ (*Convolvulaceae*), գաղձազգիներ (*Cuscutaceae*), բորակաթուփազգիներ (*Nitrariaceae*), կակաչազգիներ (*Papaveraceae*), ջղախոտազգիներ (*Plantaginaceae*), տորոնազգիներ (*Rubiaceae*), կերոնազգիներ (*Typhaceae*), գոճմակազգիներ (*Thymelaeaceae*), զուգատերևազգիներ (*Zygophyllaceae*) ընտանիքներն են:

Այսպիսով, «Որդան կարմիր» արգելավայրը ներկայանում է հարուստ բուսական կենսաբազմազանությամբ: Արգելավայրի բուսական կազմում կան կերաբույսեր, ուտելի, ներկատու, դեղատու և տնտեսական այլ արժեք ունեցող բուսատեսակներ, որոնք բոլորն էլ խիստ պահպանման կարիք ունեն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրք (բարձրակարգ բույսեր և սնկեր): Երկրորդ հրատարակություն, Երևան, ՀՀ բնապահպանության նախարարություն, 2010:
2. Սարգսյան Գ.Պ., Ոսկանյան Վ.Ե., Սյրոտյան Ա.Լ. Ագրոգիտություն, 9-10, Երևան, էջ 466-469, 2009:
3. Барсегян А.М., Барсегян Н.А., Мкртчян А.Л. Вопросы современной ботаники и микологии (Сб. статей, посвящ. 75-летию каф. ботаники ЕГУ), Ереван, с. 57-59, 1999.
4. Тахтаджян А.Л., Федоров А.Н. Флора Еревана. Л., “Наука”, 1972.
5. Флора Армении. 1-11, Ереван, 1954-2010.

Ստացվել է 29.12.2011